

Անկարելի է, ասումէ նիւ—Եօրգ նահանգի ժողովի հաշիւներէց մին, ըստ արժանւոյն գնահատել կանանց ուսուցչութեամբ մեր դպրոցների վերայ եղած բարեբար ազդեցութիւնը, նոքա իւրեանց բնութեան քըն-քշութեամբ աւելի հզօր են քան թէ մարդիկ իւրեանց նորոգիչ տէօ-րիայով, խիստ կանոններով, հաստատուն զրութիւններով. նոցա քաղց-րութիւնը յաղթումէ խռովարար հոգուն, որը խստութիւնը միայն կզայ-րացնէ. նոցա համոզական յանդիմանութիւնները աւելի լաւ կներգործեն, քան թէ ճիշդ արամբանական խրատները :

Սորանից կհետևի՝ արդեօք որ Ամերիկացիները անսխալական են իւրեանց կրթութեան հարցի վերայ ունեցած հայեացքում: Մենք մեր կողմից լաւ ենք համարում այն դրութիւնը որով մանուկների կրթութիւնը յանձնվումէր կանանց: Բայց շխտեալով արդէն այն մօրուսաւոր աշակերտների մասին, որոնց ներկայութիւնը երիտասարդ վարժուհու ունկնդիրների մէջ, մեր գաղափարներին աշխարհար է երևում: ցոյց տանք մի պակասութիւն դպրոցների որի առաջը առնումեն հետզհետէ, այդ պակասութիւնը տարրական ուսումնարաններում պարապող երիտասարդ օրիորդների անփորձութիւնը պիտի համարւի որը խափանումէ ամերիկական ուղղութեան տալ այն բոլոր պտուղները, որոնց, ըստ երևոյթին, նորա սկզբունքի ընդարձակութենից և արդիւնաւորութենից կարելի էր սպասել: Տարրական ուսումնարանը կառավարող վարժուհուց, քիչ կրթութիւն է պահանջվում, և հարկաւ նորան քիչ հարկաւոր է, մանուկներին ամենատարրական գաղափարներով ուսուցանելու համար: Բայց որքան և համեստ լինեն այս պարապմունքները, նոքա այնու ամենայնիւ պահանջումն փոքր ինչ իմաստութիւն, մի որոշ յաջորդութիւն դասատւութեան ցճի մէջ, որին, նոր դպրոցից ելող 17 տարեկան վարժուհին շատ քիչ լինումէ ընդունակ: Ինչպէս մի մարդ իւր երիտասարդական հասակի մէջ ստացած տպաւորութիւնների հետքերը կրումէ միշտ իւր վերայ, այսպէս և կրթութեան բոլոր ընթացքի վերայ մնումէ սկզբնական կրթութեան տուած սխալ ուղղութիւնը: Մի քանի նահանգներում, մանաւանդ Բօստօնում, այս բանիս համոզւել սկսան, Հասարակական կրթութեան ժողովը սկսեց ենթարկել միատեսակ քննութեան բոլոր ուսուցիչներին ու նշանակել հաւասար վարձ և ժամանակից սկսած մտաւ մի կատարեալ յաջորդութիւն դասերի մէջ:

$$(112 \frac{1}{2} \text{ ft} - 7 \frac{1}{2} \text{ ft} - 1 \frac{1}{2} \text{ ft}) :$$

U. 2.

ԸՆՏԱՆԻՔԻ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆ.

(U.S. 2,222,222)

($\zeta = \tau - \frac{1}{2} - \frac{1}{2}\pi i$, $\eta = \tau - \frac{1}{2}$, $\theta = \tau - \frac{1}{2} + \frac{1}{2}\pi i$, 1881),

Նէպիրները բաղդաւոր էին իւրեանց ծնօղների կողմից, մանաւանդ մօր
կողմից, Լէտի Սառայ Լէնսկսը աշխատումէր իւր օրդիների մանկութեան

առաջին տարիներից սկսած նոցա ներշնչել բարձր մտքեր, յարգանք դէպի ազնիւ գործելը և ասպետական ոգի. և այս բոլորը արտայայտուածին նոցա կեանքի մէջ. նոցա մայրը մինչև իւր մահը շարունակուած էր իւր որդիներին պարտաճանաչութեան և ազնուութեան ճանապարհի վերայ պահպանել:

Պետական մարդիկներին, իրաւաբաններին և աստուածաբաններին մայրերից, մանաւանդ աչքի են ընկնում Բեկօնի, Էրսկինի և Բրուսի մայրերը, սոքա ամենքը մեծ ընդունակութիւններ ունեցող կանայք էին, իսկ առաջինը մինչև անգամ երեւելի գիտնական կին էր. այսպիսի էին և Վաննինգի, Պուրրոնի և Նախագահ Արամի, Հերբերտի, Պալէի և Ուէսլէի մայրերը:

Լորդ Բրուսը, իւր մեծ մօր Բորեթսօն ուսուցչապետի քրոջ վերայ, մեծ յարգանքով է խօսում. նա զխաւորապէս գրգռեց Բրուսի մէջ սէր դէպի գիտութիւնները և առաջին անգամ նորա մէջ սկիզբն դրաւ այն անխորտակելի արիւթեան, որով որ նա ձգտումէր դէպի ամենայն տեսակ գիտութիւն, և որը լորդ Բրուսի բոլոր կեանքում, նորա ամենաընտիր յատկութիւնն էր կազմում:

Վաննինգի մայրը Իրլանտուհի էր և բնութիւնը նորան պարզեւած էր երեւելի ընդունակութիւններ. նորա շնորհալի որդին մինչև իւր կեանքի վերջը ցոյց էր տալիս նորան շատ մեծ սէր և յարգանք, Այս կինը ունէր մեքի գիրքնական կորովութիւն. «Արդարեւ,— Վաննինգի կենսագիրը ասումէ,— եթէ որ մէնք հաստատ աղբիւրներից գործին տեղեակ չլինէինք մեզ անհնարին կլինէր տեսնել նորա դէպի իւր մայրն ունացած խորին և սրտառուչ մեծարանքը, առանց այն հղբակացութեան գալու, որ այդպիսի անխարդախ մեծարանքի առարկան պիտի ունենար հազուադէպ և հիանալի յատկութիւններ: Այն ընկերութիւնը, որ նա կառավարումէր, նորան յարգումէր, իբրեւ մի մեծ կորովամիտ կնոջ. նա խօսումէր ոգևորւած և ազդու կերպով, ինքնուրոյն ձեւերով, ընդհանրապէս նոր, հետաքրքիր և օգտակար առարկաների վերայ. նորա ոգևորութիւնը տարօրինակ էր թուում այն մարդիկներին, որոնք նորան լաւ չէին ճանաչում»:

Պուրրոն մեծ յարգանքով է խօսում իւր մօր վերայ, իբրեւ արի և խելացի կնոջ մասին. իւր կեանքի մէջ ունեցած յառաջադիմութիւնը նա զխաւորապէս առգրումէր նորա խելացի խորհուրդներին, նորա բարութեան և ազնիւ փառասիրութեան մասին տուած դասերին, որոնց մայրը մտադրութեամբ հաստատումէր իւր որդիների մտքերի մէջ. «Իմ խելճ հօրից ստացած միակ ժառանգութիւնը, որով ես կարող եմ պարծենալ — առհասարակ նա ասումէր,— շատ շնչին էր. նա բաղկանումէր անհրապօրիչ զէմքից, ինչպիսի և իւրեանն էր. եթէ աշխարհը ինձ որ և իցէ աւելի թանկագին բան է վերագրում, քան թէ նորա զէմքը կամ արտաքին տեսիլը, կամ քան թէ երկրային հարստութիւնը, սա միայն նորա համար է՝ որ սիրելի մայրը իւր որդւոյն իւր մտաւոր զանձները միայն ի ժառանգութիւն թողեց»:

Նախագահ Ադամսը, Պոստոնի մէջ օրհորդական դպրոցում՝ հարցաքննութեան ներկայ գտնւելով, աշակերտութիւններից հասցէ ստացաւ, այս բանը նորան ի սիրտ և ի հոգի շարժեց, և իւր խորին շնորհակալութիւնը յայտնելով, յարմար առիթ համարեց յիշել այն հզօր ազդեցութեան մասին, որը կանանց դաստիարակութիւնը և ընկերութիւնը արեւ էին նորա սեպհական կեանքի և բնաւորութեան վերայ: «Մանուկ գոլով, — ասում է նա, — ես վայելում էի, կարելի է որ, մարդին մատչելի ամենամեծ բարիքը, ես մայր ունէի, որը անձանձիր աշխատում էր իւր որդիների բնաւորութիւնը կանոնաւոր կրթել: Նա ինձ տուաւ ամենայն տեսակ խրատ (առաւելապէս կրօնական և բարոյական), որը ես իւրացրի իմ երկար կեանքի ընթացքում, թէպէտ ես չեմ ասում, որ նա կատարեալ էր: Բայց սա նորա յարգելի յիշատակին իրաւացի տուրք կլինի, եթէ որ ես ասեմ, թէ ինչ թերութիւններ կամ խոտորումն նորա խրատներից որ ես ունեցել եմ, դա ոչ թէ նորա մեղքն է, այլ իմն է:

Ուէսլէի եղբայրները շատ սիրում էին իւրեանց ծնօղներին, թէպէտ և մայրը, — աւելի քան թէ հայրը, — ազդեցութիւն էր անում նոցա մտքի վերայ և զարգացնում էր նոցա բնաւորութիւնը: Հայրը հաստատ կամք ունեցող մարդ էր, բայց յաճախ իւր ընտանիքի հետ շատ խիստ և բռնաւորաբար էր վարւում: (այսպէս օրինակ նա մի անգամ վճռեց թողնել իւր կնոջ, որովհետեւ նորա խղճին հակառակ էր աղօթել այդ ժամանակ թագաւորող կայսեր համար, և նա վերջերում իւր այդ վճիռը թողեց, երբ պատահական դէպքով Վիլհելմ Գ. — ը մեռաւ:) Այսպիսի հրամայողական յարաբերութիւններ ունէր նա իւր որդիների հետ ևս: այսպէս օրինակ, նա իւր Մեդէտաբէլ դստեր ստիպեց, իւր կամքի հակառակ, իւր չսիրած մարդին հետ ամուսնանալ, որը նորան բոլորովին անարժան էր: իսկ մայրը, որ ունէր կորովամտութիւն և ջերմ սէր դէպի ճշմարտութիւնը, որոշումներ իւր քնքշութեամբ, դիւրահաւան բնութեամբ, իւր հաւատարմութեամբ և պարզութեամբ, իւր որդիներին լաւ դաստիարակ և զուարճասէր կին էր, որոնք աստիճանաբար նորա օրինակով կազմակերպւում էին: Մայրը իւր որդիների մտքերին՝ կրօնական խնդիրների մէջ՝ այնպիսի ուղղութիւն տուաւ, որ նոքա առաջին տարիներում Մէթոդիստների անուն ստացան: Մայրը 1709 թ. Վեսմինստրում ուսանող՝ Սամուէլ Ուէսլէի որդուն գրած նամակում ասում է. « ես քեզ խուրհուրդ կտայի, որչափ հնարաւոր է, քո պարապմունքները որոշեալ մէթոտով անել: այս ճանապարհով միայն դու կսովորես իւրաքանչիւր թանկագին րոպէից օգուտ քաղել, և քո պարտաւորութիւնները անասելի դիւրութեամբ կատարել: » Նա այս « մէթոտը » որոշեց, իւր որդուն համոզելով « ամեն բանի մէջ մի սկզբունքի հետեւել: » Այն ընկերութիւնը, որը վերջերում Ջօն և Չարլզ եղբայրները Օկսֆորդում հիմնեցին, արգարեւ, զլիաւորապէս, նորա խրատների հետեւանքն էր:

Իսկ բանաստեղծների, մատենագիրների և դերասանների վերաբերու-

Թեամբ կարելի է ասել, որ նոցա մայրերի զղացմունքը և ուղղութիւնը նոցա հանձարի ուղղութեան վերայ մեծ ազդեցութիւն է անուամբ մենք սորա օրինակը, առանձնապէս տեսնումենք Գրէի, Տօմսօնի, Սկօտտի, Սօուտի, Բուլլէրի, Շիլլէրի և Գէօտէի կեանքի մէջ, Գրէյը իւր քնքշութիւնը և իւր սիրող բնութիւնը, համարեալ, ամբողջապէս, իւր մօրից ժառանգեց, մինչդեռ նորա հայրը դաժան և չարակամ մարդ էր, Յիրաւի, Գրէյը կանացի բնութիւն և սակաւ արիութիւն ունէր, նա էր ամօթխած և իւրեան զսպող մարդ, բայց կեանքի և բնաւորութեան կողմից անպարսաւելի, Բանաստեղծի մայրը պահպանումէր ընտանիքը, այն ժամանակից ի վեր, երբ անարժան ամուսինը նորան թողեց. մօր մահից յետոյ Գրէյը նորա գերեզմանի վերայ դամբանագիր գրեց, որը նորան ներկայացնումէ « իրբե բազմաթիւ որդիների բազմահոգ և քնքշ մայր, որոնցից միայն մինը նորանից երկար ապրելու անբախտութիւնն ունեցաւ » Ինքը՝ բանաստեղծը իւր սեփական ցանկութեան համաձայն, պաշտելի գերեզմանին մօտ թաղեցաւ :

Գեօտէ, ինչպէս և Շիլլէր, իւր մտքի և բնաւորութեան կազմութիւնը պարտական էր իւր մօրը, կիւն, որ գերբնական ընդունակութիւններ ունէր, և լինելով հանձարեղ և հնարագէտ մայր և փորձառու կին, շատ մեծ յատկութիւն ունէր ոգևորել մատաղ և ջանասէր գլուխները սուրբ եղանակով նոցա կեանքի գիտութիւնը, Մի հիացած ճանապարհորդ, նորա հետ ունեցած երկարատե տեսակցութենից յետոյ, ասաց. « Այժմ հասկանումեմ, թէ ինչու Գեօտէն եղաւ այն, ինչ որ նա է » : Նայն ինքն Գեօտէ իւր մօր յիշատակը ակնածութեամբ էր յիշում և գգում, « Նա ապրելու արժանի կին էր », ասաց նա միանգամ նորա համար. Փրանկֆուրդ այցելելով նա պտուում էր, այն մարդին, որը գէպի իւր մայրը բարի էր եղած և նորան շնորհակալութիւն էր մատուցանում :

Արի—Շէֆֆէրի մայրը,—որի գեղեցիկ գծագրութիւնը, նկարիչը սիրումէր արտադրել իւր Բէատրիչէ, սուրբ Մօնիկի և ուրիշի պատկերների վերայ,—ոգևորումէր նորան սիրել իւր արուեստը և նորան խորհուրդ էր տալիս անձնազահտութեամբ շարունակել իւր գործը, Հոլլանդիայում և Դօրտրէխտի մէջ ապրելով, նա նորան ուսանելու համար նախ Լիւ, և ապա Փարիզ ուղարկեց. մօր գէպի որդին ուղարկած նամակները լի էին միշտ մայրական իմաստուն խրատներով և կանացի քնքշող գթով :

« Եթէ դու միայն ինձ տեսնել կարողանայիր, զրեց նա միանգամ,— թէ ինչպէս ես համբուրում եմ քո պատկերը, յետոյ, մի քանի ժամանակ անցնելով, կրկին առնում եմ նորան և, արտասուքները աչքերիս, քեզ անուանում եմ « սիրեկան որդեակ », դու կհասկանայիր, թէ ինձ համար ինչ արժէ երբեմն իշխանական դաժան լեզու բանացնել քո վերայ և քեզ վշտացնել . . . Զանաւորութեամբ աշխատիր, ամեն բանից առաջ համեստ եղիր, երբ տեսնում ես, որ դու ամենքից բարձր ես, այդ

ժամանակ քո արածներդ համեմատիր, նոյն ինքն բնութեան հետ կամ քո սեփական մտքի կատարելատյի (իտեպի) հետ, և այդ ժամանակ ահա դու, տեսնելով որ բնութեան պահանջներին հակառակ ես գործած, ազատ կլինես հպարտութիւնից և սնտախառութիւնից:

Հաստ տարիներ յետոյ, երբ ինքն Արի-Շէֆֆեր մեծ հայր եղաւ, նա դորովով էր յիշում մօր խրատները և նոյնը կրկնում էր իւր որդիներին: Այսպիսով, լաւ օրինակի կենսական դժը մի սերունդից միւսն է փոխանցւում, միշտ իւր դժը պահելով: Երբ 1846 թ. Արի-Շէֆֆեր գրումէր իւր գտնելու տիկին Մարթօլէին, մեռած մօր խրատները միտքը եկան, և նա ասաց. «Որդեակ իմ, յիշողութեանդ մէջ լաւ տպաւորիր «պրոֆէ» բառը, քո մեծ մայրը սակաւ էր նորան մոռանում: Բանը նորանումն է, որ ոչ մի բան կեանքի մէջ այնպիսի լաւ պտուղ չի բերէ, ինչպիսին բերումէ ձեռքի աշխատութեամբ վաստակածը կամ անձնազոհութիւնը: Առհասարակ զոհաբերութիւնները միշտ պիտի շարունակին, եթէ մենք ցանկանումենք ձեռք բերել կեանքի յարմարութիւն և բարեկեցութիւն: Այժմ, երբ ես արդէն փոքր չեմ, կարող եմ ասել, որ իմ կեանքի սակաւ շրջանները ինձ այնքան բերկրութիւն էին պատճառում, որքան նոքա, երբ զոհաբերութիւն էի անում կամ ինձ զուարճութիւններից զրկում էի: Անշուշտ՝ ոչ» — ահա իմաստունի նշանաբանը, սա մի յատկութիւն է, որի օրինակը մեզ Ինքն Յիսուս Քրիստոս տուաւ»:

Ֆրանսական պատմաբան Միշլէ դէպի իւր մայրը հետեւեալ սրտառու թացագործութիւնն է անում, իւր ամենաժողովրդական զրբերից մինի մէջ, որը կատարի վէճերի առարկայ դարձաւ իւր յայտնելու ժամանակ.

«Երբ ես այս բաները գրումէի, իմ մտքիս ներկայանումէր մի կին, որի զգօն և անաչառ հոգին անկասկած այս պատերազմի մէջ ինձ պիտի պաշտպանէր, սորանից երեսուն տարի առաջ ես նորան կորցրի (այն ժամանակ ես մանուկ էի), դորա փոխանակ, նորա յիշատակը իմ մէջ անմահ մնաց և նա առաջնորդումէ ինձ իմ բոլոր կեանքի ընթացքում:

«Նա ինձ հետ համբերեց ազդատութեան, բայց նորան ինձ հետ հարստութիւնը վայելել սահմանւած չէր: Մանուկ գողով ես նորան վշտացնում էի, իսկ այժմ նորան մխիթարել չեմ կարող. թէ ո՛ւր են նորա ռոկորները հանգստանում, ես մինչև անգամ այդ չգիտեմ, ես շատ աղքատ էի այն ժամանակ, որ նորա դերեզմանին տեղ գնել կարողանայի:

«Մինչդեռ ես շատ բանի համար նորան պարտական եմ: Իւրաքանչիւր րոպէին իմ մտքերի և խօսքերի մէջ (թողլով իմ գծագրութիւնը և շարժմունքները) ես տեսնում եմ իմ մօրը. իմ մօր արիւնն էր որ իմ մէջ ներշնչեց համակրութիւն դէպի անցեալ դարերը և քնքոյշ յիշատակութիւն բոլոր այն բաների մասին, որոնք այլ ևս չկան:

«Ես ի՞նչով հատուցանեմ իմ այս ծերութեան ժամանակ, նորան ունեցած պարտքս: Միայն մի բանով, որի համար նա ինձանից շնորհակալ

պիտի լինի—յօգուտ կանանց և մայրերի բողոքով ։

Բայց եթէ որ մայրը իւր որդու բանաստեղծական կամ նկարչական հանձարի վերայ բարեբար ազդեցութիւն կարող է ունենալ, նա նորա վերայ կարող է և վատ ազդեցութիւն ունենալ։ Այսպէս Լորտ Բայրօնի բնաւորութեան որոշող յատկութիւնները—նորա մօքի մոռլլ յափշտակութիւնը, արհամարհանք դէպի ինքնազսպումն, նորա ասեկութեան կամ քէնի դառնութիւնը, նորա անպատճառ բարկութիւնը—այս բոլոր պակասութիւնները զխաւորապէս բացատրում են նորանով, որ նորա ծնւելու օրից սկսած, նորա ինքնահաւան, դիւրագրգիռ և կամակոր մայրը նորա վերայ թշնամական ազդեցութիւն ունեցաւ։ Նա մինչև անգամ որդու ֆիզիքական պակասութիւնների համար նորան մեղադրումէր։ Նոցա մէջ պատահած ապք վէճերի ժամանակ յաճախէր պատահում, որ նա ատնումէր հրքաշը կամ ունելին և նետումէր որդու ետեւից, որը այդ ժամանակ աշխատում էր նորանից հեռանալ։ Պատմում են, որ տիկին Բայրօնը մեռած է բարկութենից, իւր կապալառուի հաշիւները տեսնելիս։ Այսպիսի անձնական վարմունքի հետեանքը Բայրօնի ապագայ կեանքի հիանդոտ կազմութիւնն եղաւ։ Իւր կեանքի կողմից անբախտ, երեւի և միւսնոյն ժամանակ թոյլ լինելով, նա միշտ իւր մէջ կրում էր այն թոյնը, որով սնուցեր էր նորան իւր մայրը մանկութեան ժամանակ։ Ահա թէ ինչի նա բացագանչումէ «2այլդ—Հարօլդի» մէջ։

«Ժամանակ է ինձ աւելի քիչ վայրենաբար մտածելու. ես այնչափ երկար յանձեցայ մտալ մտքերին, մինչև վերջապէս իմ միշտ ալեկոծ և վատապահ ուղեղս երեւակայութեան և բոցի յորձանք դարձաւ։ Եւ այսպիսով, որովհետեւ մանկութենից չեմ սովորած իմ սիրտը սանձահարել ուստի և իմ կեանքի աղբիւրները թիւնաւորւած են ։

Միւսնոյն կերպով, Սամուէլ դերասանի մօր՝ միստրիս Ֆուտի՝ բնաւորութիւնը յայտնեցաւ իւր ուրախ, թեթեւամիտ և անհոգ որդու կեանքի մէջ։ Թէպէտեւ նա (մայրը) մեծ հարստութիւն ժառանգեց, բայց շուտով վատնեց և պարտքի համար բանտարկեցաւ։ Այս դրութեան մէջ նա գրեց Սամուէլին, որը իւր եկամուտներից տարէնը նորան տալիս էր 100 ֆ. ստր. «Թանկազին Սէմ, պարտքի համար ես բանտարկւած եմ. եկ և օգնիր քեզ սիրող մօրը»։ Ե. Ֆուտ.։ Որին որդին շատ յարմար պատասխան տուաւ։ «Սիրելի մայրիկ, ես ևս միւսնոյն դրութեան մէջն եմ, որը խանդարումէ սիրող որդուն դէպի իւր սիրող մայրը ունեցած պարտքը կատարելու։—Սէմ Ֆուտ.։

Անխոհեմ մայրը կարող է մոլորեցնել շնորհալի որդուն, թելադրելով նորան անառողջ մտքեր։ Այսպէս, Լա—Մարտինի մայրը, ասում են, որ Ռուսսոյի և Բէրնարդէն տը սէն—Պիէրի դպրոցի մէջ կրթեց իւր որդին սխալ գաղափարներով կեանքի մասին, ուստի բնականից ունեցած նորա բուռն զգայական զօրութիւնը, որը հարկաւոր էր սանձահարել, դեռ աւելի զարգացումն ստացաւ և նա իւր բոլոր կեանքի ընթացքում զոհ

դարձաւ արտասուների կեղծաւ որոյ թեան և անմտութեան։ Լա—Մարտինը իւր «Խոստովանութիւններ» անունով գրքի մէջ, ծիծաղաշարժ գրութեան է հասնում, երբ խօսում է իւր վերայ, և իւրեան անուանում է «Մանկութեան արձան, որը կանգնած է ի տես և յօրինակ երիտասարդ մարդիկներին»։ Սէնդ—Բեռլ ասում է նորա համար, «նա մշտական ստրուկ էր իւր ընտիր ընդունակութիւններին, իւր կարողութիւնը նոցա տիրելու չէր բաւում»։ Նա իւր բոլոր ընդունակութիւնները վատնեց, ի բաց առեալ իւր ճարտարախօսութիւնը, որը կարծես անկողնապսակ էր և որի վերայ նա երգում էր, իրրեւ դիւթական սրնգի վերայ։»

Մենք խօսեցանք Ուաշինգտօնի մօր մասին, իրրեւ ազնիւ, գործունեայ կնոջ մասին, Ուեննալ այնպիսի մի յատկութիւն, ինչպիսի է գործելու ընդունակութիւնը, ոչ միայն յարմար է ներկայ կանանց դասին, այլ և մասամբ իւրաքանչիւր լաւ կազմակերպւած ընտանիքի խաղաղութեան և բարեկեցութեան հապէս անհրաժեշտ պայման է կազմում։ Պէտք է ընտելանալ ոչ միայն առուտուրին, այլև ընդհանրապէս բոլոր կենսական գործերին և այն բոլորին, երբ հարկաւոր է կառուցանել, յօրինել, պատրաստել և կատարել, և այս բոլոր դէպքերում՝ ընտանիք կառավարելը և տնտեսութիւն վարելը ոչ պակաս կարեւոր գործ է, քան թէ մագաղին կամ հաշուէտուն կառավարելը։ Սորա համար պահանջում է մեթօն, ճշգրտութիւն, զգուշութիւն, աշխատասիրութիւն, տնտեսութիւն, յօրինելու հմտութիւն, կարգաւորութիւն, ճարպիկութիւն, եկամուտների և ծախսերի ծայրը ծարին բերելու ընդունակութիւն և գիտութիւն։ Բոլոր այս յատկութիւնները գործելու համար անհրաժեշտ են, ահա ինչի համար այն կանանց որոնք ցանկանում են յաջողութեամբ վարել ընտանեկան գործերը—ուրիշ խօսքերով, որոնք կամենում են գերդաստանի երջանկութիւնը—նոյնքան անհրաժեշտ է աշխատութիւնը, ինչքան և այն տղամարդիկներին, որոնք պարապում են առուտուրով, արուեստով, կամ ձեռակերտութեամբ (manufacture)։

Բացի այդ երկար ժամանակ կարծիք էր տարածւած, թէ այդպիսի պարապմունքները կանանց գործ չեն, և թէ գործելու ընտելութիւնը և ընդունակութիւնը միմիայն սեփական են այր մարդիկներին։ Վեր առնենք օրինակի համար հաշւագիտութիւնը, Միստէր Բրայտը ասում էր. «Սովորեցրէք մանուկին հիմնաւորապէս թուաբանութիւն և դուք նորան մարդ կշինէք»։ Բայց ի՞նչի. — որովհետև թուաբանութիւնը մարդին ընտելացնում է ճշգրտութեան և զգուշութեան, սովորեցնում է նորան մտածել և համեմատել, Բայց արդեօք չա՞տ աղջկների են ուսուցանում թուաբանութիւն ինչպէս հարկն է։—Շատ քիչերին։ Սորա հետեանքը ի՞նչ է լինում, երբ աղջիկը կին է դառնում, նա հաշիւների մէջ տգէտ լինելով և չիմանալով գումարում և բազմապատկում, չէ կարողանում եկամուտների և ծախսերի հաշիւները վարել ինչպէս հարկն է, այդ պատճառով և նա շատ սխալներ է անում, որը կարող է առիթ լինել զանազան ընտա-

նեկան սաստիկ վէճերի: Այն կինը, որ իւր գործը կատարել չգիտէ այսօրն թուաբանութեան ամենահասարակ կանոնների համաձայն չի կարող վարել տնային տնտեսութիւնը, ընդունակ է իւր տղիտութեան պատճառաւ այնպիսի յիմարութիւններ անել, որոնք կարող են նորա ընտանեկան հանգստութեան և բարեկեցութեան վերին աստիճանի փնասակար լինել:

Մէթօտը, որ գործերի մէջ գլխաւոր պայման է կազմում, տնային կենցաղավարութեան մէջ բոլորովին անհրաժեշտ է: Արեւիցէ գործ կատարելու համար հարկաւոր է կանոնաւոր մէթօտ: այս ժամանակ անկարգութիւն անել անհնար է: Մէթօտը պահանջում է ճշգրտութիւն, որը գլխաւոր գործող յատկութիւն է: Այն կինը և այն մարդը, որոնք իւրեանց գործերի մէջ ճշգրտութիւն չեն պահում ներշնչում են զգուանք, որովհետեւ ժամանակը վատնելով, նոքա առիթ են տալիս կարծելու, թէ մենք նոցա աչքին բաւականաչափ նշանակութիւն չունենք, որ նոցա յորդարենք գործերի մէջ աւելի ճշգրտութիւն ունենալ: Գործունեայ մարդի համար ժամանակը ոսկի է, իսկ գործունեայ կնոջ համար ճշգրտութիւնը նորանից էլ աւելի է: Սա է կազմում միտքիցէ տան հանգստութիւն և բարեկեցութիւն, հետեւաբար և ընտանիքի երջանկութիւն:

Ինչպէս մարդի նոյնպէս և կնոջ մէջ կրկնորդ նշանաւոր գործող յատկութիւնն է խոհանութիւնը: Խոհանութիւնը գործնական հանձար է, որը միայն միտք մշակելով կարելի է ձեռք բերել: Այս յատկութեանից կախու մնումնի որեւիցէ վարմունքի պատշաճաւորութիւնը, որեւիցէ գործողութեան ընտրութիւնը և նորա կատարման եղանակը: Խոհան կինը և այլ մարդը հաշուումէ գործելու միջոցները աչքի առաջ ունենալով գործողութեան ժամանակը և եղանակը, Խոհանութիւն կարելի է ձեռք բերել զիտութեան միջոցով սաացած փորձառութեամբ:

Եւ ահա այս է պատճառը որ կինը պիտի աշխատասէր լինի, որպէս զի առօրեայ կեանքի աշխատութիւնների և հոգսերի մէջ յաղթող հանդիսանայ: Միեւնոյն ժամանակ, որպէս զի կինը, իրրեւ իւր որդու ստնտու, իրրեւ դաստիարակչուհի, իւր գերդաստանը լաւ կառավարել կարողանայ, հարկաւոր է նորաւ տալ ամենայն անհրաժեշտ միջոց և օգնութիւն և այս անելու համար բաւական է միայն նորա միտքը զարգացնել: Անոջ համար միմիայն բնածին սէրը բաւական չէ:

Բնազգումը որ կառավարումէ ստորին դասի կենդանիներին դաստիարակութեան պէտք չունի, բայց մարդկային միտքը, որ ընտանիքի ամենայն պահանջներն էլ լրացնում, զարգացման պէտք ունի, նոյն ինքն նախախնամութիւնը մանուկների ֆիզիքական առողջութեան հոգսը յանձնած է կանանց, իսկ ինչպէս յայտնի է, ֆիզիքական զարդացումից, կախում ունի մարդի թէ մտաւորական և թէ բարոյական զարգացումը: Աինը միայն բնութեան օրէնքների համաձայն գործելով, որոնց որ նա լաւ տեղեակ պիտի լինի, որպէս զի կարողանայ նոցա հետեւել, ընտանիքի մարմնաւոր:

մտաւոր և բարոյական առողջութիւնը կարող է ապահովել, Բնութեան օրէնքների իսկական հասկացողութենից զուրկ մօր սիրոյ և հօգսերի հատուցումը լինումէ այն, որ իւր որդին ծաղիկ հասակում՝ գերեզման է մանուած:

Այն դէպքը, որ մեր կողմերում ծնող տղաներից մեծ մասը, մինչև 5 տարեկան հասակի հասնելը մեռնումէ, կարելի է բացատրել նորանալ, որ մայրերը չգիտեն բնութեան օրէնքները, որ տեղեկութիւն չունեն մարդի կազմութեան, մաքուր օդի, մաքուր ջրի օգուտների մասին, որ նոքա չեն կարող առողջարար կերակուր պատրաստել: Ստորին դասի կենդանիների մէջ այդ տեսակ մահկանացութիւն չկայ:

Արծիք չկայ, որ բանականութիւնը, որով պարզեաւորած է ինչպէս կին արմատը նոյնպէս և տղամարդը, կնոջ տուած է նորա համար, որ նա նորանից օգուտ քաղէ և նորան գործած է, բայց ոչ թէ նորա համար, որ նա անգործունէութենից բոքրոսնի: Այսպիսի ձիւրքերը և շնորհները երբէք առանց նպատակի չեն տրուում: Երարիչը շնորհներ տալու մէջ կարող է առատ լինել, բայց նա հրեւէք շոյլ չի լինի: Կնոջ նշանակութիւնը ոչ երբէք կայացած է նորա մէջ, որ նա լինի մի ապուշ, մի թանձրամիտ ստրուկ, կամ ևս առաւել, ամուսնու պարտաւորութեան ժամանակի ինչպէս զուարճութիւն պատճառօղ մի գեղեցիկ առարկայ, նա ապրումէ ինչպէս իւր, նոյնպէս և ուրիշների համար: Եյն ծանր պատասխանատուութիւնը և պարտաւորութիւնները, որոնց մէջ է կայանում նորա կոչումը, պահանջումն մտաւորական կրթութիւն և զթառատ սիրտ, նա իւր վսեմ և բարձր պաշտօնը կատարած չի լինի, եթէ որ նորա կրթութիւնը սահմանաւորուածէ հասարակութեան միջի թեթեւ և ախորժելի արուեստների դիտութեամբ, որոց վերայ այժմ՝ այնչափ օգտակար ժամանակ են կորցնում: որովհետեւ բոլոր այս կատարելութիւնները, թէպէտ նոքա երիտասարդութեան և գեղեցկութեան նոր հրապոյր են տալիս, որոնք ինքն ըստ ինքեան դիւթիչ և հիացուցիչ են, բայց գործնական կեանքի գործերի մէջ համեմատաբար աւելի քիչ օգուտ են բերում:

Հին հռոմայեցիների մէջ, երբ կնոջ համար ասուումէր, թէ նա տունը նստած բուրթ է մանում, դա արդէն ամենամեծ գովեստ էր, որը նոքա կարող էին տալ միայն ազնուական Մատրոնային (այսպէս էր կոչում հռոմայեցի ազնուական կինը): Մի ժամանակ ասումէին, թէ կնոջ բոլոր գիտութիւնը պիտի լինի քիմեայ, այսինքն դիտենալ լաւ ճաշ պատրաստել, և աշխարհագրութիւն, — թէ իւր տան մէջ սենեակները ինչպէս են դասաւորւած: Բայրօն, որի գաղափարը կնոջ մասին ընդհանրապէս այնչափ բարձրներից չէր, իլուր ամենքին ասումէր, ես կցանկայի որ կնոջ գրագրանը բաղկանար միայն Աստուածաշնչից և խոհանարութեան վերաբերեալ գրքից: Այսպիսի գաղափարը, կնոջ բնաւորութեան և մտաւորական զարգացման մասին, մի կողմից, նոյնչափ անհեթեթ, անձուկ և միակողմանի է, որչափ որ միւս կողմից, նորա հակառակ այժմ տարած-

ւած զաղափարը՝ անշնական և ծիծաղելի է՝ որ իբր թէ կինը պարտա-
կան է ստանալ այնպիսի կրթութիւն, որը որչափ հնարաւոր է՝ նորան
այր մարդու հաւասար անէր, նոցա մէջ եղած զանազանութիւնը բոլորովին
ոչնչացնէր, նորան այր մարդի հետ հաւասար իրաւունք և ձայն
տար, և օգնէր նորան ամեն բանի մէջ տղամարդին հակառակորդ դառնա-
լու, որը և կեանքը զարձնումէ կատաղի և ինքնասիրութեան պատե-
րազմ՝ իշխանութեան, վիճակի և փողի համար:

Ընդհանրապէս, դաստիարակութիւնը և խիստ կարգապահութիւնը
որոնք փոքր հասակով տղաներին աւելի շատ պիտանի են, նոյնչափ ևս
օգտակար են լինում միևնոյն հասակով աղջկներին, և կրթութիւնը, և
մտաւորական զարգացումը, որոնք տրւում են տղամարդիկներին, ոչ
պակաս օգուտ են տալիս կին արմատներին:

Յիշատի այն բոլոր փաստերը, որոնք հաստատում են բարձր կրթ-
ութեան հարկաւորութիւնը տղամարդի համար, նոյն անում են և կնոջ
վերաբերմամբ: Ընտանեկան կեանքի ամենայն երեւոյթների մէջ միայն
իմաստութիւնն է, որ աւելացնումէ կնոջ գործունէութիւնը և նորան
աւելի օգտակար է անում. նա տալիս է կնոջ միտք և նախատեսութիւն,
տալիս է նորան կարողութիւն կեանքի մէջ անխուսափելի վտանգները նա-
խատեսել և նոցա առաջն առնելու համար անհրաժեշտ միջոցները գտնել,
ներշնչում է նորան ընտանեկան տնտեսութիւնը վարելու լաւագոյն հը-
նարքներ, և ամենայն հանգամանքներում մեծացնումէ նորա ազդեցու-
թիւնը, եթէ կնոջ բնաւորութիւնը և միտքը զարգացած պիտի լինի իւր
սեփական բարեկեցութեան համար, նորա նոյնպէս լաւ դաստիարակած
պիտի լինին ուրիշների երջանկութեան համար. նոյն ինքն այր մարդիկ
չեն կարող ոչ առողջ միտք և ոչ մաքուր բարոյականութիւն ունենալ,
եթէ կանայք նորա հակառակն են. իսկ եթէ—ինչպէս մենք համարում
ենք—ժողովրդեան բարոյական վիճակը զխաւորապէս կախումն ունի ըն-
տանեկան դաստիարակութենից, ապա կնոջ դաստիարակութիւնը պէտքէ
հաշւել հասարակութեան համար շատ կարեւոր գործ. անջ բարոյականու-
թեան մաքրութիւնն և մտաւորական կրթութիւնն է, որ հովանաւորումէ
և նեցուկ է լինում տղամարդիկներին ոչ միայն բարոյական բնաւորութեան,
այլև մտաւորական կարողութեան: Որչափ կատարելապէս են ծաղկում
տղամարդի և կնոջ կարողութիւնները, որչափ միաբան և կարգաւորեալ է
հասարակութիւնը, այնչափ հաւատարիմ և հաստատուն է նորա կատա-
րելութիւնը և զարգացումը:

Երբ սորանից կէս դարից աւելի առաջ, Նապոլէոն Ա. ասաց, թէ
Քրանսիայում ամենից աւելի զգալի է մայրերի պակասութիւնը, նա սո-
րանով կամնում էր հասկոցնել, թէ Քրանսական ժողովուրդը պէտք
ունի այնպիսի ընտանեկան դաստիարակութեան, որի առաջնորդներն
լինէին ազնիւ, բարեգործ և խելացի կանայք:

Յիշատի, առաջին Քրանսական յեղափոխութիւնը ներկայացնումէ այն-

պիսի հասարակական թշուառութիւնների օրինակ, որոնք առաջ են գալիս կնոջ ազդեցութիւնը արհամարհելուց, ազդեցութիւն, որ մեղմացնումէ և մարքում մարդի բարքը, երբ որ կատարւեցաւ այս մեծ յեղափոխութիւնը, հասարակութիւնը, թաղւած էր յանցանքների և անապականութեան մէջ, Բարոյականութիւնը, կրօնքը, առաքինութիւնը կեղտոտւած են հեշտասիրութեամբ, կնոջ բնաւորութիւնը ապականւած էր ամուսնական հաւատարմութիւնը կարեւոր չէր համարւում, Մայրական զգացմունքը գտնւում էր յանցանքի մէջ, Ընտանիքը և տունը ապականւած էր, Փրանսիան զրկւեցաւ մայրերից, Տղաները արձակւեցան և յեղափոխութիւնը յայտնւեցաւ, կանանց աղաղակներով և սաստիկ կատաղութեամբ ։

Բայց սարսափելի դասը առանց որևէ ազդեցութեան մնաց, և կրկին Փրանսիան սաստիկ վնաս կրեց խիստ կարգապահութեան, հնազանդութեան, ինքնազսպման պականութեան պատճառով, որոնց հիմնաւորապէս ձեռք բերել կարելի է միայն ընտանիքի մէջ, Ասում են, որ Նապոլէոն Գ. այն ժամանակուայ Փրանսիայի թուլութիւնը, որը նորան անօգնական և արխնշաղաղ խոնարհեցրեց մինչև յաղթողների ոտքի տակ ժողովրդեան թեթևամտութեան և կանոնների պականութեան, նոյնպէս զուարճասիրութեան, որը, պէտքէ խոստովանել, նոյն իսկ ինքն հովանաւորում էր, Այսպէս ուրեմն, երևումէ, որ եթէ Փրանսիան կամենում է վեհանձն, մեծ և ազնիւ լինել, պէտքէ որ ընտելանայ այն խիստ կարգապահութեան օրին մատնանիշ եղաւ Նապոլէոն Ա. և սա էր, «Լաւ մայրերի առաջնորդութեան տակ տնային դաստիարակութիւն» ։

Կնոջ ազդեցութիւնը ամեն տեղ միևնոյն է, Ամենայն տեղ նորա վիճակը մեծ ազդեցութիւն ունի ժողովրդի բարոյականութեան, սովորութիւնների, բնաւորութեան վերայ, ուր որ նուաստացած է կինը—այնտեղ նուաստացած է հասարակութիւնը, ուր նա բարոյապէս սուրբ է անբիժ է և զարգացած—այնտեղ բարձրանումէ հասարակութիւնը նորա համեմատութեամբ ։

Կնոջ կրթել նշանակումէ տղամարդին կրթել, բարձրացնել նորա բնաւորութիւնը նշանակումէ տղամարդի բնաւորութիւնը բարձրացնել, ընդարձակել նորա մտաւորական ազատութիւնը նշանակումէ ամբողջ հասարակութեան ազատութիւնը ընդարձակել և ապահովել, որովհետև հասարակութիւնները ծնւում են ընտանիքներից, ինչպէս որ ազգերը—մայրերից ։

Բայց եթէ ճշմարիտ է, թէ ազգի բնաւորութիւնը բարձրանումէ կանանց լուսաւորելով և նոցա բարքը մեղմացնելով, ապա դորա հակառակ այդ օգուտը շատ կասկածելի կլինի, եթէ որ կինը կսկսի վիճել կոպիտ գործնական գործերի և քաղաքական գործունէութեան մասին, Կինը նոյնպէս շատ քիչ կարող է կատարել մասնաւորապէս տղամարդի վերաբերեալ գործերը, ինչպէս բուն կանանց գործերը անմատչելի են տղամարդին, բայց

ուր որ կինը բաժանուած է տընից և իւր ընտանիքից, մի որեւիցէ ուրիշ գործի համար, այնտեղ հետեւանքները միշտ կորստական են եղել հասարակութեան համար: Յիրաւի վերջին ժամանակի ամենազնիւ հայրենասէրների զխաւոր ջանքն էր ազատել կնոջ իւր մարդի հետ քարածուխի հանքերում, գործարաններում, երկաթ և կղմինդր պատրաստելու գործանոցներում:

Լիւսիսային երկիրներում շատ յաճախ պատահումէ, որ ամուսինը պարտաւոր տանը նստումէ: Իսկ մայրերը և աղջկները աշխատում են գործարաններում: Սորա հետեւեալը, գլխաւորապէս, լինումէ ընտանեկան ազատութեան տնային խիստ կարգապահութեան և ընտանեկան կարգաւորութեան անկումն: *)

Փորձելով մի տեսակ կարգ կայ, որ կանայք ամէնքը գործեր և պարտավորւեցներ ունին. նոքա ծառայում են մակագիններում կամ նստում են հաշուեսեղանի առջև, իսկ այր մարդիկ անգործ շրջում են ծառատունկերում (boulevard). բայց այս տեսակ կարգի հետեւանքն է լինում այն որ կինը չի սիրում իւր տունը, որից հետեւումէ ինչպէս ընտանիքի նոյնպէս և հասարակութեան ապականութիւնը և անկումը:

Նոյնպէս պատճառ չկայ կարծելու, թէ կանանց բարւոքիլը և բարձրանալը կապահովւի, եթէ որ նորանց կտրուի քաղաքական իրաւունքներ,

(*) Իրեւուն եւ վեց տարի սորանից առաջ, Սամսէլ Սմայլս, գործնականապէս ծանօթ լինելով գործին, գրեց եւ ժողովրդականացրեց հետեւեալ նկատողութիւնը, որ մինչև ցայսօր բաւականին ճիշտ է. թէ եւ գլխաւորապէս Լօրտ Շէֆսպ իւր ազնիւ ջանքերի շնորհով գործարանների գործաւորների վիճակը բաւականին բարելաւացաւ. ո գործարանական սիստէմը, չնայելով որ նա շատ նպաստեց քաղաքի հարստանալուն, բայց սատակ վստ ազդեցութիւն ունեցաւ ազգի ընտանեկան կեանքի վերայ, Նա մտաւ ընտանեկան եւ սուրբ անարատ կեանքի մէջ եւ քանզեց ընտանեկան եւ հասարակական կապերը, Նա բաժանեց կինը իւր ամուսնուց, որդիները հայրերից, Կանաւանդ. նա ազդեցութիւն ունեցաւ կնոջ բնաւորութեան ապականելուն վերայ, Նորա բուն պարտաւորութիւնն է ընտանեկան պարտաւորութիւնները կատարել, տնտեսութիւն վարել, ընտանիքը կառավարել, ընտանիքի միջոցները պահպանել, նորա կարօտութիւններին բաւականութիւն տալ: Բայց գործարանը հեռացրեց նորան այս պարտաւորութիւններից: Տունը տուն լինելուց դադարեցաւ, որդիները մեծացան առանց գաստիարակութեան եւ հսկողութեան: Բնքոյշ եւ հաստատուն սէրը թուլացաւ: Կինարմատը դադարեցաւ ամուսնուն բարեկամ, սիրելի եւ քնքոյշ կին լինելուց, սկսեց նորան աշխատակից լինել: Նա երկարակեցաւ այնպիսի ազդեցութիւններին, որոնք ոչնչացնում են առաքնութեան ամենալաւ պաշտպաններից մինը—բարքի եւ մտքի համեմտութիւնը: Գործարանի աղջկները չունենալով իւրեանց առաջնորդ բնականութիւնը եւ բարոյական առողջ սկզբունքները, իւրեանց մէջ հետզհետէ զարգացնում են անկախութեան ցնդկութիւնը: Յօժարութեամբ թոթափելով ծնողների նոցա վերայ դրամ լուծը, նոքա թողնում են տները եւ ընկնում են իւրեանց ընկերակիցների յանցանքների մէջ: Ֆիզիքական եւ բարոյական մթնոլորտը, որի մէջ նոքա ապրում են, գրգռում են նոցա անամական կեքերը. նոցա մէջ վստ օրինակի ազդեցութիւնը վարակիչ է լինում, եւ չարիքը աւելի եւ աւելի է սաստկանում »:

Թէեւ մեր ժամանակում գտնուում են շատ մարդիկ, որոնք հաւատում են «ձայնատուութեան» ամենակարողութեան և յառաջագոյն ասում են թէ կնոջ «ազատելուց» պիտի հետեին շատ բարիքներ, Սակայն հարկաւորութիւն չկայ այս հարցման մասին երկար դատողութիւններ անել, Բաւական է ասել, թէ կինը զրկելով քաղաքական իշխանութիւն ունենալուց, դուրս փոխանակ մասնաւոր կեանքի մէջ, դատարարակիւղ ընտանիքում իւր տղաներին և աղջկաներին, որոնք մի ժամանակ պիտի կատարեն այր մարդի կամ կնոջ վերաբերեալ պարտաւորութիւններ, Բաժնիկալ Բէնտամ ասաց, որ մարդը, եթէ մինչև անգամ կամենայ, չպիտի կարողանայ կնոջ ձեռից իշխանութիւնը խլել, որովհետև նա աշխարհը կառավարում է «բռնակալ իշխանութեամբ» ինչպէս և այն իշխանութիւնը, որով որ նա կառավարում է սերն է, Մարդկային ազգը կրթել, ի հարկէ, նշանակում է աւելի իշխանութիւն ունենալ, քան թէ կարող է սպասել կինը, պարզամետի անգամներ ընտրելու իրաւունք ստանալով, կամ օրէնսդրական գործերին մասնակցելով:

Այսու ամենայնիւ կանանց գործունէութեան մի մասնաւոր ճիւղ կայ, որը ճշմարիտ յեղափոխիչներից պահանջում է լուրջ ուշադրութիւն, թէպէտև մինչև ցայսօր նորա մասին, կարծես չնկատելով մոռանում են խօսել, Խօսքըս կերակուրի ամենալաւ պահպանութեան և պատրաստութեան համար է, որի շտաբումը ներկայումս—խոհանոցի վերաբերեալ հասարակ տեղեկութիւնների պակասութենից, պարզ կերպով հասնում է անհաւատալիութեան: Եթէ մարդկային ազգին բարեգործ ենք համարում նորան, ով որ բուսցնում է որևիցէ երկու չափ ցորեն այնտեղ, ուր ոք մինչև այդ ժամանակ միայն մի չափ էր բուսնում, ապա ոչ պակաս հասարակութեան բարեգործ պիտի համարենք նորան, ով կերակուրի մէջ գործածած մարդկային աշխատութեան և արուեստի արտադրութիւնները ամենալաւ գործնական կերպով է գործածում և եթէ որ եղած պաշարը գործածէր կատարեալ կերպով և ինչպէս որ պէտքէ, այն ժամանակ ոչ միայն մեր երկիրների մշակելի տարածութիւնները պիտի ընդարձակէին այլ և պիտի բարւոքէր առողջութիւնը տնտեսութիւնը և տնային հանգստութիւնը, Եթէ որ մեր կանանց հարցի քարոզիչները իւրեանց ուժգնութիւնները դէպի այս կողմը ուղղէին, նոքա ընտանիքի շնորհակալութիւնը պիտի վաստկէին և մարդկային ազգի ամենամեծ բարեգործների կարգը պիտի դասւէին:

ՃէՖ. Զ. Դաս. աղ.

Թ. Պալէան.